

1951 - 2021



70 Ամեակ

ԼՐԱՏՈՒ
ԹԻՒ 1 - ՄԱՐՏ 2022





Տնօրէնութեան Խօսք

Մեծանուն հայրենասէր, Հայ Բանաստեղծութեան Իշխան՝ Վահան Թէքէեանի անունը կրող կրթութեան այս վառ օջախը՝ Հայ Մշակոյթի սիւներէն մին, Եօթանասուն տարիէ ի վեր մեծ խանդավառութեամբ ուսում կը ջամբէ ու կը դաստիարակէ հայեցի կրթութեամբ եւ ազգային բարձր գիտակցութեամբ հպարտ սերունդներ:

Վահան Թէքէեան Վարժարանը ուսուցանելու, սորվելու եւ աճելու իրայատուկ վայր մըն է: Մեր հոգատար ուսուցչակազմը օժտուած է ուսուցման բարձրորակ հմտութեամբ՝ կեդրոնանալով իրաքանչիւր աշակերտի անհատական կարիքներուն վրայ:

Վահան Թէքէեան վարժարանի առաքելութիւնը հայ աշակերտներուն բարձրորակ ուսմամբ ջամբելն է:

- Մեր ուսումնական ծրագիրը կեդրոնացած է քննական մտածողութեան, առաջնորդութեան հմտութիւններու, նկարագրի կերտման, ինքնաձանաչման եւ ինքնաբացայայտման վրայ:
- Մենք կ'արժեւորենք եւ կ'երաշխատենք իրաքանչիւր ուսանողի ընկերային և զգացական աճումը, ջանալով՝ անոր ուսուցման ընթացքը դարձնել հաճելի եւ հետաքրքրական:
- Մենք կ'օգտագործենք նորարարական, ուսանողակեդրոն մանկավարժական մօտեցումը ներգրաւելու աշակերտները եւ օգնելու անոնց հասնելու իրենց փայփայած նպատակներուն. դառնալով արդիւնաւետ քաղաքացիներ և յարատեւ սովորողներ:

Որպէս ուսումնակրթական հաստատութիւն, մենք կը ձգտինք պահպանել անցեալի ասանդութիւնները, դիմակայել ապագայի մարտահրաւէրները նորարարական ձեւերով, վստահութեամբ, վճռականութեամբ և ոգեւորութեամբ:

Կ'ուզեմ իմ խորհին եւ անկեղծ շնորհակալութիւն եւ երախտագիտութիւնը յայտնել մեր վարժարանին վերելքին սատարող բոլոր անհատ բարերարներուն, անձնութիւններու գործող ազգայիններուն, ինչպէս նաեւ ԹՄՄ Հիմնադիրներու Մարմինին, Հոգաբարձութեան, ուսուցչակազմին, ծնողաց յանձնախումբի ժրաջան տիկիներուն ու Սանուց Միութեան աշխոյժ երիտասարդական յանձնախումբին, որոնց նիւթական ու բարոյական ներդրումը եւ աջակցութիւնը մեր վարժարանի առաքելութեան, կը նպատակադրեն ապահովել հայ ժողովուրդի յաւերժութիւնն ու նոր սերունդներուն անվտանգ եւ որակեալ կրթութիւն:

Լաւագոյն բարեմաղթանքներով՝

Սեւանա Սեմերճեան Տարագճեան – Տնօրէնուհի

Մարտ 20, 2022

Ամփոփ տեղեկագիր Վահան Թեքեան Միջն. Վարժարանի ծրագիրներուն եւ գործունէութիւններուն 2021-2022 ուսումնական տարուան

Մօտաւորապէս երկու տարուան հեռակայ ուսուցումէն ետք, անհուն ուրախութեամբ դիմաւորեցինք մեր աշակերտները՝ 2021-2022 դպրոցական տարեշրջանին համար:
Յաջորդող էջերուն մէջ կրնաք հետեւիլ նկարներուն, որոնք խօսուն վկաներն են մեր գործունէութիւններուն:



Վերամուտ Նախակրթարանի եւ Միջնակարգի



Մանկապարտէզի Վերամուտ

STEAM Արհեստավարժական Ուսումնական Ծրագիր

Շարունակեցինք ներառել Անգլիական SAM labs-ի "STEAM" ծրագրի գործածությունը համագործակցաբար Professional Learning Center-ի հետ:

Վերահաստատեցինք համաձայնագիրը e-Skool-ի հետ, որոն համաձայն մեր վարժարանի ուսուցիչները շարունակեցին համացանցի գործածութեամբ փոխանցել առօրեայ նիշերը, տան պարտականությունները, քննութեան դասացուցակը, վարքը, եւ առցանց դասաւանդութիւնը:



Նկարագրի Կրթութեան Ծրագիր

Մեր վարժարանէն ներս սկսանք ներառել Նկարագրի Կրթութեան Ծրագիրը (Character Education Program): Կը հաւատանք, որ այս ձեւով աշակերտները պիտի իրացնեն կեանքի հմտութեան արժէքներ եւ ջանան ըլլալ օրինակներ լաւ նկարագրի:

Ուսուցիչի Վերաորակավորում

Սեպտեմբերին, մեր ուսուցիչներին՝ Տիկ. Յաննա, եւ Տիկ. Նաուել մասնակցեցան Տար ըլ Մեշրիքի -ի կողմէ պատրաստուած Արաբերէն լեզուի դասատուներու վերապատրաստութեան դասընթացքներուն:



Պրն. Աւետիս Տիպանը ընդունուեցաւ LAU-ի եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կազմակերպած, Հայկական վարժարաններու ուսուցիչներու մասնագիտական վերաորակավորման ծրագիրին “Teacher Development Program for the Armenian Schools in Lebanon”

Հոկտեմբեր 16-ին, Տիկ. Ռիթա Թամուկեան եւ Պրն. Աւետիս Տիպան մասնակցեցան Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան կողմէ հովանաւորուած, Զննուկ արեւմտահայերէնով մանկավարժական աղբիւրներու կայքէջի առցանց ներկայացումին:



Նուիրատուութիւններ

Հոկտեմբեր 12-ին մեր վարժարանը հիւրընկալեց Rotary Club Beirut Cedars-ի (RCBC) պատուիրակութիւնը գլխաւորութեամբ՝ Հայաստանի Հանրապետութեան Rotary Club Գիւմրիի մասնաճիւղի ղեկավար՝ Աշոտ Կարապետեանին: Սոյն կազմակերպութեան կողմէ կատարուած նուիրատուութեան, ամրան ընթացքին տեղադրուեցաւ խմելու ջրի մաքրագտման նոր համակարգ մեր վարժարանի բակին համար: Ստացանք 17 հատ նոր UPS-ներ, ինչպէս նաեւ Մանկապարտէզին համար 3 հատ թուային փոխգործօն պաստառներ Interactive digital boards: Մեր խորին երախտագիտութիւնը կը յայտնենք RCBC-ի նախորդ նախագահին, Պրն. Յակոբ Տանձիկեանին, որուն նախաձեռնութեամբ կատարուեցաւ այս ծրագիրը ինչպէս նաեւ ուրիշ ծրագիրներ՝ մեր վարժարանին համար:

Շնորհակալ ենք այն բոլոր անհատներուն եւ կազմակերպութիւններուն որոնք կ'օժանդակեն նիւթապէս կամ կրթական սարքեր տրամադրելով:

Դպրոցական Ներքին Ատենամարզանքներ

Մեր վարժարանը շարունակեց ատենամարզանքի պահերը նպատակ ունենալով զօրացնել ազգային արժեքները եւ ինքնութիւնը ինչպէս նաեւ ընկերային գիտելիքներ: Վահան Թեքեան վարժարանի աշակերտները մեծ խանդավառութեամբ մասնակցեցան զանազան գործունէութիւններու:



- Ուսուցողական դասախօսութիւն՝ Քորոնա պակաձեւ ժահրի (COVID-19) անհրաժեշտ կանխարգելիչ միջոցներու մասին: Դասախօսութիւնը կատարեց մեր վարժարանի գիտութեան ուսուցչուհի Օրդ. Սինթիա Միլատենեան:



Նկարագրի Կրթութեան Ծրագրի ընդմէջէն ներկայացուեցաւ սպառնական եւ յոխորտանքի արտայայտութիւններու՝ "Bullying" կանխարգիլման մասին դասախօսութիւն, պատրաստուած մեր վարժարանի Անգլերէն լեզուի ուսուցչուհիներ՝ Օրդ. Թամար Ճեհիգեանի եւ Օրդ. Նարին Խաչատուրեանի կողմէ:

"Թարգմանչաց Տօն"ի առիթով ունեցանք հիւր բանախօս Հոգեշնորհ Տէր Աւետիք Արդ. Տէր Կարապետեան:





Ունեցանք յիշատակի հանդիսություն երկարամեայ ուսուցչուհի եւ հոգաբարձուհեան ատենադպրուհի՝ Օրդ. Լորիս Թուղլաճեանի անթառամ յիշատակին:

Գիրքերու Տրամաբաշխում

Նոյեմբեր 9ին, մեր վարժարանը այցելեց Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերութեան նախագահ՝ Դոկտ. Յրայր Ճէպէճեան, որ նուիրեց, Մանուկին Բացատրական Աստուածաշունչը գիրքերը:



Դեկտեմբեր 15-ին աշակերտներուն եւ ուսուցչակազմին բաժնուեցաւ Ուղղագրական Բացատրական Բառարան Տիար Եղիա Գայայեանի կողմէ:

Տոնակատարություններ և Մրցանքներ

Մեծ խանդավառությամբ տոնեցինք Լիբանանի Անկախության տոնը
Նոյեմբեր 19-ին:



Դեկտեմբեր 3-ին
ունեցանք դասարանային
ատենամարզանք
Պրպարա:

- Դեկտեմբեր 4-ին մեր աշակերտներին՝ Մանուել Պորանեան (Միջն.Գ.), Մարի Բլեր Նալչաճեան (Միջն.Բ.), Սէրլի Ստեփան (Միջն.Բ.), Սելինա Քէսուէեան (Միջն.Ա.) մասնակցեցան, Լուսի Թութունճեան գծագրական մրցումին:
- Կաղանդի նախօրեակին մեր վարժարանին մէջ կը բուրբէր կաղանդի մթնոլորտ (բոլոր կարգերուն):
- Santa Hat Day Դեկտեմբեր 14-ին
- Ա. Բ. Գ. Դ. և Ե դասարանի աշակերտները նամակներ յղեցին Կաղանդ Պապուկին:
- Յունուար ամսուան ընթացքին Միջն. Ա., Բ. և Գ. դասարաններու աշակերտներին՝ Վալէնթինա Սրապիոնեան (Միջն.Գ.), Ալին Գէորգեան (Միջն.Գ.), Ալեքս Գոճայեան (Միջն.Բ.), Սէրլի Ստեփան (Միջն.Բ.) և Փաթիլ Փափագեան (Միջն. Ա.) մասնակցեցան Համազգայինի Վարչութեան, Գիր ու Գրականութիւն մասնագիտացած մասնաճիւղի կողմէ կազմակերպուած միջոցառողական առցանց մրցանքին “Բանաստեղծութիւններ Կաղանդ Պապային” խորագրով:

Դեկտեմբեր 16-ին՝ տեղի ունեցավ ամանորեան աշակերտական խրախճանք , Powerful Kids team-ի մասնակցութեամբ: Մեր աշակերտները՝ Մանկամտութեն Միջն. Գ. դասարան ստացան նուէրներ:
Մանկամտութեն 3-րդ դասարանի աշակերտները այցելեցին Master Mall, ուր նկարուեցան եւ ուրախ ժամանակ անցուցին:





23 Փետրուար 2022-ի,
մեր վարժարանի Յակոբ
Պարսամեան սրահէն ներս
տեղի ունեցաւ Վարդանանց
տօնակատարութիւնը:

Մարտ 8, 2022-ին տօնեցինք, Ուսուցչաց Տօնը:

Առողջապահական Ընդհանուր Զնման Օր

Մարտ 10, 2022-ին մեր վարժարանը հիյրընկալեցինք Հաուլըրտ Գարակչոզեան Հաստատութենէն բուժաշխատողներ, որոնք կատարեցին ընդհանուր բուժզննումներ մեր բոլոր աշակերտներուն:



Արցախի և Սփիւռքի Հայկական Վարժարաններու և Դպրոցներու Միջեւ Քոյր Դպրոց Ծրագիր

Արցախի և Սփիւռքի հայկական
վարժարաններու և դպրոցներու միջեւ
քոյր դպրոց ծրագրի և հայեցակարգի
մանրամասնութիւնները քննարկելու
նպատակով, Նոյեմբեր 4, 2021-ին,
ունեցանք zoomով հանդիպում



Արցախի Հանրապետութեան Նախագահի
խորհրդական Ազատուհի Սիմոնեանին եւ
Արցախի Հանրապետութեան Կրթութեան,
Գիտութեան, Մշակոյթի և
Մարմնակրթութեան (Սպորտի)
նախարարի հետ:

Դարձեալ, Դեկտեմբեր 15, 2021ին ունեցանք
zoomով հանդիպում Արցախի
Հանրապետութեան Նախագահի
խորհրդականին, Արցախի
Հանրապետութեան Կրթութեան,
Գիտութեան, Մշակոյթի և
Մարմնակրթութեան (Սպորտի)
նախարարի եւ կարգ մը այլ հայկական
վարժարաններու տնօրէններու հետ:



16 Փետրուար, 2022-ին, Վահան Թեքէեան
վարժարանի մանկապարտէզի բաժինը
մեծ շուքով նշեց Տեառնընդառաջի տօնը եւ
25 Փետրուար 2022-ին, մեր փոքրիկները
տօնախմբեցին Բուն Բարեկենդանը:



Մեր ժրաջան Ծնողաց Յանձնախումբը միշտ պատրաստ է սատար հանդիսանալու դպրոցին առաքելութեան ստեղծելով առողջ եւ զուարթ մթնոլորտ:

Մեր դաս-խաղի վրայ հիմնուած գործունէութիւնները:





16 Մարտ 2022 -ին Պեյրուֆի Վահան Թեքեան Միջնակարգ Վարժարանի Հոգաբարձությունն ու Տնօրէնութիւնը պատիւը ունեցան Վարժարանին հարկին տակ հիւրընկալելու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան վսեմաշուք Նախագահ՝ Մեթր Պերժ Սեդրակեան: Անոր կ'ընկերակցէին ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Տիար Ժերարտ Թիֆէնքճեան , ԹՄՄ

Հիմնադիրներու Մարմնի Ատենապետ Տիար Յակոբ Գասարճեան, ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնի Ատենադպրուի եւ Պեյրուֆի Վահան Թեքեան Միջն. Վարժարանի Հոգաբարձութեան Ատենապետուի՝ Տիկ. Անի Լաչինեան Մակարեան, որոնք յուշատախտակով պատուեցին Մեթր Պերժ Սեդրակեանը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահութեան 20 ամեակին առիթով իր տարած ազգանուէր առաքելութեան համար:

Այս ուրախ առիթով, իրայատուկ շնորհատրական եւ շնորհակալական խօսքեր ուղղուեցան ՀԲԸՄ-ի ունեցած նիւթական իշխանական նուիրատուութեան եւ բարոյական ներդրումին , Օգոստոս 2020ին տեղի ունեցած Պեյրուֆի Նաահանգիստի աղէտալի պայթումի հետեանքով Վահան Թեքեան Վարժարանի կրած վնասներու վերանորոգման աշխատանքներուն սատար հանդիսանալուն համար, որոնք ամենայն բժախնդրութեամբ կատարուեցան Տիար Ժերարտ Թիֆէնքճեանի երկրաչափական ճարտարապետներու խումբին կողմէ, վերահսկողութեամբ Վարժարանի Հոգաբարձութեան փոխ ատենապետ՝ Տիար Պերժ Արապեանի:

Սոյն ընդունելութեան ներկայ էին նաեւ ԹՄՄ Հիմնադիրներու Մարմնի, ՀԲԸՄ Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ու ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ՝ Տիար Մայք Վայէճեան եւ ՌԱԿ Լիբանանի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ, ԹՄՄ Տեղական Վարչութեան Ատենապետ եւ Վահան Թեքեան Վարժարանի Հոգաբարձութեան Ատենադպիր՝ Տոքթ. Յակոբ Փափագեան:





20 Մարտ 2022-ին, Պէյրութի, Պուրժ Յամուտի Քաղաքապետարանը, Մասթրըր Սօլին մէջ կազմակերպեց, Մեր Շուկան տօնավաճառը: Վահան Թէքէեան Միջն. վարժարանի խումբ մը աշակերտուհիներ մասնակցեցան սոյն տօնավաճառին, խանդավառելով մթնոլորտը ազգագրական պարով մը, որուն պարուսույցն էր Օրդ. Փաթիլ Պալապանեան:



Մարտ 21 2022-ին մեր աշակերտները տօնեցին գարնան առաջին օրը:



Email: info@vahantekeyan.com
Website: www.vahantekeyan.com
Facebook: Vahan Tekeyan School in Lebanon
Instagram: [vahan.tekeyan](https://www.instagram.com/vahan.tekeyan)
Phone number: 01/260525 - 01/260574